25.581

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

333.3
П-81

16 JUL 2013

25581

СА И/460

15 JAN 2010

Հ. Ս. Խ. Հ. ԿՈՄՏՆՏԺՈՂԿՈՄԱՏ

333.3
П-81

# ՎՈՐՈՇՈՒՄ

Հ. Ս. Խ. Հ. ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՅԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎՐԱ ԴՐՎՈՂ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

յեվ

# ՀՐԱՀԱՆԳ

ԲՆԱԿ. ՇԵՆՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԲԱՂԵՑՆՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՅԵՐԵՎԱՆ 1933

Յերեվան գյուղհրատի տպարան
Պատ. № 201
Գլավլիտ. 43-01—Տիրաժ. 500

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им А Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
61916 · 67

# ՎՈՐՈՇՈՒՄ

**ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կառավարչական յեվ վարչական մարմինների կողմից տնային վարչությունների կամ նրանց փոխարինող մարմինների վրա դրվող պարտականությունների մասին։—**

**1933 թ. ապրիլի „ „-ին։**

1. ՏՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա). ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, Բ). ՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ, Գ) ՏՆԵՐԻ ՊԱՐԵՏՆԵՐԻ, Դ). ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ, Ե). ՏՆԱՏԵՐԵՐԻ ՈՒ ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻ ՅԵՎ Զ). ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ՈՒ ԿԱՀԱՎՈՐՎԱԾ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ԴՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԸ.—

1) ՅԵՐԵԽԱՅԻՆ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆՊԱՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԵՆԴԱՆԻ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՏԱԼԸ։

2). ԱՆՁՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՅԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆՑԱԳՐԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՎՅԱԼ ՏԱՆԸ ԱՊՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՏԱԼԸ։

3) ԸՆՏԱՆԻՔԻ ՀԻՎԱՆԴ ԱՆԴԱՄԻՆ ԽՆԱՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ԲԱՑԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾԻՑ ՀԻՎԱՆԴԻՆ ԽՆԱՄՈՂ ԱՅԼ ԱՆՁ ՉԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՏԱԼԸ։

4) ԱՊԱՌԻԿ ՈՒՆԵՑՈՂԻ ԳՈՒՅՔԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ, ՀԱՐԿԵՐԻ ՏՈՒՐՔԵՐԻ ԴԻՄԱՑ ՑՈՒՑԱԿԱԳՐԵԼԻՍ ՅԵՎ ԳՆԱՀԱՏԵԼԻՍ ՆԵՐԿԱ ԼԻՆԵԼԸ։

5) ՖԻՆ ՏԵՍՉԻ ԿՈՂՄԻՑ ՇԵՆՔԸ ԴԻՏԵԼՈՒ, ԳՈՒՅՔԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԿԱ ԼԻՆԵԼԸ։

6) ԴԱՏԱԿԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ Ի ԿԱՏԱՐ ԱԾՈՂ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԱԾՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՇԵՆՔԵՐԸ ԿԱՄ ՊԱՀԵՍՏՆԵՐԸ ՔՆՆԵԼԻՍ ՅԵՎ ԲԱՆԱԼԻՍ ՆԵՐԿԱ ԼԻՆԵԼԸ։

7) ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԴԱՏԱԿԱՆ ՎՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐ-

ՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՅԵՎ ՆՐԱ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԱՐԳԵԼՔ ԴՆԵԼԻՍ ՆԵՐԿԱ ԼԻՆԵԼԸ։

8) ԴԱՏԱՔՆՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՊԵՏՔԱՂՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱ ԼԻՆԵԼԸ։

9) ՆԱԽԱԶԻՆԱԿՈՉԱՅԻՆՆԵՐԻ ՅԵՎ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ՆՐԱՆՑ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆ ՍՏՈՒԳԵԼԸ։

10) ՏԵՂԱԿԱՆ ԶԻՆՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՅԵՐԿՈՒ ԱՄՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՑԱԿԱՅՈՂ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ։

11) ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ՅԵՎ ՆԱԽԱԶԻՆԱԿՈՉԱՅԻՆՆԵՐԻ՝ ՏԵՂԱԿԱՆ ԶԻՆՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ ՎՐԱ ՀՍԿԵԼԸ ԶՈՐԱԿՈՉԻ ԺԱՄԱՆԱԿ։

12) ՏԱՆ ԱՊՐՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԶՈՐԱԿՈՉԸ ՎԵՐՋԱՆԱԼՈՒՑ ՀԵՏՈ ՅԵՎ ԽՈՒՍԱՓԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԱԿԱՆ ԶԻՆՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԿԱՄ ՄԻԼԻՑԻԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ։

13) ՁԻՅԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐՔՈՒՅՔՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆ ՍՏՈՒԳԵԼԸ։

14) ԶՈՐԱՄԱՍԵՐԻ ՁԻՅԵՐ, ՍԱՅԼԵՐ ՅԵՎ ԼԾԱՍԱՐՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ՅԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԻՆՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻՆ ԿԱՄ ՄԻԼԻՑԻԱՅԻՆ ՁԻՅԵՐ, ՍԱՅԼԵՐ ՅԵՎ ՍԱՐՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՑ ԽՈՒՍԱՓՈՂ ՏԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ։

15) ՎԵՐԱՀԱՇՎԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱԿԱ ՁԻՅԵՐԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎՐԱ ՀՍԿԵԼԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԻՆՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՑՈՒՑԱԿԱԳՐՎԱԾ ՁԻՅԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ։

16) ԴԱՏԱՐԱՆԻ ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐ, ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՀԱՆՁՆԵԼԸ, ՅԵԹԵ ԾԱՆՈՒՑԱԳԻՐԸ, ԿԱՄ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՆՁՆՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԸ ՀԱՍՑԵԱՏԵՐԻՆ ՏԱՆԸ ՉԻ ԳՏՆՈՒՄ։

17) ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ԸՆԴՈՒՆԱԾ ՅԵՎ ՀԱՐԿԵՐԻ ՈՒ ՏՈՒՐՔԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-



ՆԵՐԻ, ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ. ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐԻ, ՀԱՐԿԱԹԵՐԹԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ԹՂԹԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ՝ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԲԱՑԱԿԱՅՈՂ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻՆ։

18) ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼԸ։

19) ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՇՏԱՊ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵԼՈՒՆ ԱՋԱԿՑԵԼԸ։

20) ՄԻԱՅՆԱԿ ՏՆՎՈՐՆԵՐԻ ԾԱՆՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏՆԱՅԻՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼԸ։

21) ՌԵՆՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՈԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ՝ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ ԳՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ, ՏԱՆ ՅԵՎ ՇԵՆՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ, ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ԸՍՏ ՏՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ԻՍԿ ՎՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ։

22) ՏԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ, ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԵՎՏՐԱԿԱՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՈՒ ԱՅԼ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ՏԱՆԸ ԱՊՐՈՂ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ ԱԶԱՏ ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՏԵՐ ԱՆՁԱՆՑ, ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԻ, ԱՌԵՎՏՐԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՆԱՇԽԱՏ ՅԵԿԱՄՈՒՏՈՎ ԱՊՐՈՂՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՐՍԱՅՈՒՄ ՑՈՒՑԱԿԱԳՐՎԱԾ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ ԿԱԶՄԵԼԸ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՅԴ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ, ԱՐՀԵՍՏԻ ՅԵՎ ԱՊՐՈՒՍՏԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՓԱՍՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ՏԱՆ ՄԵՋ ԱՊՐՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ԹՈՇԱԿԱՌՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ՆՊԱՍՏ ՍՏԱՑՈՂ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ, ՍՈՑԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՅԵՎ ԱՅԼ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ ԿԱԶՄԵԼԸ ՀԱՄԱՁԱՅՆ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՇՎԵԳՐՔՈՒՅԿՆԵՐԻ ԿԱՄ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ՄԵԿԱԿԱՆ ՈՐԻՆԱԿԸ ՖԻՆ ՏԵՍՉԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ։

23) ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԲՈԼՈՐ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՀՎՈՂ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՅԵՎ ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՀԵՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՖԻՆՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼԸ։

24) ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՖԻՆ ԲԱԺԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼԸ։

25) ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՏԻՐԱԶՈՒՐԿ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼԸ։

26) ՏՆՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՅԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՐՔԵՐԸ ՎԱՐԵԼԸ ՅԵՎ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ ՄԻԼՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ։

27) ՈՏԱՐԱԶԳԻՆԵՐԻ ԱՆՁԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼԸ։

28) ԱՌԱՆՑ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՊՐՈՂ ՈՏԱՐ-ՅԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼԸ։

29) ՏՎՅԱԼ ՏԱՆԸ ԱՊՐՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼԸ՝ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ։

30) ՊԵՏՊԼԱՆԻՆ ԿԻՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼ ԱՅՍ ԿԱՄ ԱՅՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ԱՆԵԼԻՍ։

31) ՔԱՂԱՔԱՅՆԱՑՎԱԾ ՏՆԵՐՈՒՄ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԸ ՎԱՐԵԼԸ ՅԵՎ ՏԱՆ ՄԱՍԻՆ ԿՈՄՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ։

32) ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՉՎՈՂՆԵՐԻՆ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ՝ ԶՈՐԱԿՈՉԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼԸ։

33) ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՏԱԼ, ՎՈՐՈՆՔ ՀԱՍՏԱՏԵՆ, ԹԵ ՏՎՅԱԼ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԻԱՍԻՆ ԱՊՐՈՂ ԱՆՁԻՆՔՆԵՐԻՑ ՄԵԿԸ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՑ ՄԵԿԻ ԽՆԱՄՔԻ ՏԱԿ Ե ԳՏՆՎՈՒՄ։ ՀԻՇՅԱԼ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏԱԼԻՍ Ե ՏՆԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԻՄՆՎԵԼՈՎ ՎԵՐՈՀԻՇՅԱԼ ԱՆՁԻ ՏՎԱԾ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ, ՎՈՐ ԻՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Ե ՈՒՐԻՇԻ ԽՆԱՄՔԻ ՏԱԿ, ԿԱՄ ԳՐԱՎՈՐ ՎԿԱՅՈՒԹՅԱՄԲ ՅԵՐԿՈՒ ՎԿԱՆԵՐԻ, ՎՈՐՈՆՑ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ, ԿԱՄ ԹԵ ՀԱՄԱՁԱՅՆ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՌԱՆՁԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ։

34) ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆԿԵՏԱՆԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄԸ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՈՒ ՆՐԱՆՑ ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼԸ։

35) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՏԱԼԸ՝ ՏՎՅԱԼ ՏԱՆԸ ԲՆԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՅԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, (ՏՈՄՍԵՐ, ՏՐԱՄՎԱՅԻ ՔԱՐՏԵՐ ՅԵՎ ԱՅԼՆ) ԿԱՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՔԱՂԱՔԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՅԵՐԹԵՎԿԵԼՈՒ։



36) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՏԱԼԸ ՏՎՅԱԼ ՏԱՆԸ ԱՆՑՅԱԼՈՒՄ ԲՆԱԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ԱՅՍԻՆՔՆ ԱՅՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ, ՅԵՐԲ ՏԵՂԵԿԱՆՔԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՀԻՆ ՆՐԱՆՔ ՏՎՅԱԼ ՏԱՆԸ ԱՅԼԵՎՍ ՉԵՆ ԱՊՐՈՒՄ։

37) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՏԱԼԸ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ, ԲՆԱԿԵԼԻ ՅԵՎ ՎՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ, ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՎԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ, ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՅԵՎ ԵԼԵՔՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԵՏԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ։

38) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՏԱԼԸ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՅՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ, ՎՈՐԸ ԲՆԱԿՎՈՒՄ Ե ՏՎՅԱԼ ՏԱՆԸ։

39) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՏԱԼԸ ՆՐԱՆՑ ՈՒՆԵՑԱԾ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԵՍԱԿԻ ՅԵՎ ՔԱՆԱԿԻ ՈՒ ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ։

40) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՏԱԼԸ ՆՐԱՆՑ ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ, ՅԵԹԵ ՆՐԱՆՔ ՉԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ ՎԱՐՁՈՎ ՅԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԵՋ ՉԵՆ ԳՏՆՎՈՒՄ, ՎՈՐՊԵՍ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ ԿԱԴՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ։

41) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՏԱԼԸ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ ԿԱԴՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

42) ՓՈՍՏ-ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԾԱՆՐՈՑՆԵՐ, ՊԱՏՎԻՐՎԱԾ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՈՒ ՄԻՆՉԵՎ 100 ՌՈՒԲ. ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՓՈԽԱՆՈՐԴԱԳՐԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՆԵԼԸ։

43) ՓՈԽԱՆՈՐԴՅԱԼՆԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄԸ ՍՈՑԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՅԵՎ ՍՈՑԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՆՊԱՍՏ ԿԱՄ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ։

**Ծանոթութ.**— 1. ՀԱՆՐԱՅՆԱՑՎԱԾ ՍԵԿՏՈՐԻ ՏՆԵՐՈՒՄ ՆԵՐԿԱ ՎՈՐՈՇՈՒՄՈՎ ՆԱԽԱՏԵՍՆՎԱԾ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻՑ ԲԱՑԻ ՏՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԿԱՐՈՂ ԵՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ՏԱԼ ՆԱՅԵՎ ԱՅԼ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ, ՎՈՐՈՆՔ ԲԽՈՒՄ ԵՆ ՏՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ։

**Ծանօթութ.**—2. ՄԱՍՆԱՎՈՐ ՏՆԱՏԵՐԵՐԸ ՅԵՎ ՏՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԸ ՈՒ ՆՐԱՆՑ ՈՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՏԱԼ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ՉԵՆ ՆԱԽԱՏԵՍՆՎԱԾ ՆԵՐԿԱ ՎՈՐՈՇՈՒՄՈՎ. ՄԻԱՅՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՅԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՒՅՆՊԵՍ ՅԵՎ ԱՅՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ, ՅԵՐԲ ՆՄԱՆ ՏԵՍԱԿԻ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՏԱԼԸ ԴՐՎԱԾ Է ՀԱՏՈՒԿ ՈՐԵՆՔՆԵՐՈՎ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ, ՍԱԿԱՅՆ ԱՅՆ ՊԱՅՄԱՆՈՎ, ՎՈՐՊԵՍԶԻ ՏՆԱՅԻՆ ՅԵՌՅԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՒԳՄԱՆ ՅԵՆԹԱՐԿՎԵՆ ՆՄԱՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ։

2. ԱՅՍ ՎՈՐՈՇՄԱՄԲ ՎԵՐԱՑՎՈՒՄ Է Հ. Ս. Խ. Հ. ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ 1928 Թ. ՄԱՐՏԻ 9-Ի „ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՅԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎՐԱ ԴՐՎՈՂ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ“ ՎՈՐՈՇՈՒՄԸ (Հ. Ս. Խ. Հ. ՈՐ. ԺՈՂ. 1928 Թ. ՆՈ. 5 ՀՈԴ. 53)։

3. ԱՅՍ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԽԱԽՏՈՂՆԵՐԸ ՅԵՆԹԱԿԱ ՅԵՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՍՏ ՔՐ. ՈՐ. 100 ՀՈԴ.

4. ԱՌԱՋԱՐԿԵԼ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՅՍ ՎՈՐՈՇՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՐԱՀԱՆԳ ՄՇԱԿԵԼՈՒ ՅԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԽԻՍՏ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ։

Հ. Ս. Խ. Հ. Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահ՝ (Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Հ. Ս. Խ. Հ. Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի գործերի
կառավարիչ՝ (Ա. ԹՈՒԲՄԱՋՅԱՆ)

# ՔԱՂՎԱԾՔ ՀՐԱՀԱՆԳԻՑ

## ԲՆԱԿ. ՇԵՆՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՋՐԱՂԵՑՆՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼ ՏՈՒՆՏՐԵՍՏՆԵՐԻՆ, ԲՆԱԿՇԻՆԿՈՈՊՆԵՐԻՆ ՅԵՎ ԲՆԱԿՎԱՐՉԿՈՈՊՆԵՐԻՆ, ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԿԵՑՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ԿԱԶՄԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՎԱՐՁԱԿԱԼԻ ՅԵՎ ՎԱՐՁԱՏՈՒԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ։

2. ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼ ԲՈԼՈՐ ԲՆԱԿՎՈՂՆԵՐԻՆ, ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱԶԱՏԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ՀԱՆՁՆԵԼ ԳՈՒՅՔԵՐԻ ՏՐԵՍՏԻՆ ԿԱՄ ԲՆԱԿՎԱՐՉԿՈՈՊ-ԲՆԱԿՇԻՆԿՈՈՊՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱԿ ՅԵՂԱԾ ՍԵՆՅԱԿԸ ԱՅՆ ՎԻՃԱԿՈՒՄ, ԻՆՉ ՎԻՃԱԿՈՒՄ ՎՈՐ ՆԱ ՍՏԱՑԵԼ ԵՐ, ԿԱԶՄԵԼՈՎ ԴԱՐՁՅԱԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ։

3. ԲՆԱԿԱՐԱՆԸ ԲԱՐԵԿԱՐԳ ՎԻՃԱԿՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ ԱՄԲՈՂՋ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԿՆՈՒՄ Է ԲՆԱԿՎՈՂԻ ՎՐԱ։

4. ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԿԵՐՊՈՎ, ԱՌՆՎԱԶՆ ՈՐԱԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ՄԱՔՐԵԼ ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ՝ ԽՈՀԱՆՈՑ, ՋՈՒՐԳԱՐԱՆ, ԼՎԱԾՔԱՏՈՒՆ, ՊԱՏՇԳԱՄԲ, ԲԱԿ ՅԵՎ ԱՅԼՆ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ԱՅՆ ՏՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ՈՒՆԵՆ ՇԵՆՔԻ ՆԵՐՍԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂ ՀԱՏՈՒԿ ԴՌՆԱՊԱՆ, ԲԱԿԻ ՅԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՅՐԵՐԸ, ՄԱՔՐՈՒՄ Է ԴՌՆԱՊԱՆԸ։

5. ՋՈՒՐԳԱՐԱՆՆԵՐԸ ՄԱՔՈՒՐ ՊԱՀԵԼՈՒ ՅԵՎ ԶԱՆԱԶԱՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ԱՄԻՍԸ ՄԵԿ ԱՆԳԱՄ ՔԼՈՐԱԿՐՈՎ ՀԱԿԱՆԵԽՄԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼ։

6. ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ՍԵՆՅԱԿՈՒՄ ՊԱՏՇԳԱՄԲՈՒՄ ԿՈՏՐԱՏԵԼ ՓԱՅՏ, ՔԱՐԱԾՈՒԽ ՅԵՎ ԱՅԼՆ ԿԱՄ ԿԱՏԱՐԵԼ ԱՅՆՊԻՍԻ ԱՇԽԱՏԱՆՔ, ՎՈՐՊԻՍԻՆ ՈՒԺԵՂ ՀԱՐՎԱԾՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՓՉԱՑՆԻ ՏՎՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂԻ ՀԱՏԱԿԸ ՅԵՎ ՎՆԱՍԻ ՑԱԾԻ ՀԱՐԿՈՒՄ ԱՊՐՈՂԻ ԱՌԱՍՏԱՂԸ։

7. ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ԱՌԱՆՑ ԿՈՄՄՈՒՆԱԼ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՅԵՎ ԲՆԱԿՎԱՐՁԿՈՈՊ-ԲՆԱԿՇԻՆԿՈՈՊՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆԵՐՍՈՒՄ, ՇԱՐԵԼ ՄԻՋԱՊԱՏ, ԲԱՑ ԱՆԵԼ ՆՈՐ ԴՈՒՌ ԿԱՄ ԼՈՒՍԱՄՈՒՏ ՅԵՎ ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ՝ ՔԱՆԴԵԼ ՄԻՋԱՊԱՏԸ ՅԵՎ ՇԱՐԵԼ ԴՈՒՌԸ ԿԱՄ ԼՈՒՍԱՄՈՒՏԸ։

8. ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ՊԱՏԻ ՎԱՌԱՐԱՆ ՅԵՂԱԾ ՍԵՆՅԱԿՈՒՄ, ԲԱՅՑ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՓՉԱՑՆԵԼ, ԾԱԿԵԼ ԹԻԹԵՂԸ ՅԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԹԻԹԵՂՅԱ ԽՈՂՈՎԱԿ։

9. ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՀԱՆԵԼ ՎԱՌԱՐԱՆԻ ԽՈՂՈՎԱԿԸ ԱՅՆՊԻՍԻ ՁԵՎՈՎ, ՎՈՐ ՆՐԱ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԿԵՂՏՈՏՎԻ ԿԱՄ ՓՉԱՆԱ ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔՆ ՈՒ ԽԱՆԳԱՐԻ ՀԱՐԵՎԱՆ ԲՆԱԿՎՈՂՆԵՐԻՆ ՅԵՎ ՎՏԱՆԳԻ ՀՐԴԵՀՄԱՆ, ԻՍԿ ՊԱՏԵՐԻ ՄԵՋ ԾԽՆԵԼՈՒՅԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ԱՆՑՔ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ԹԻԹԵՂՅԱ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԱՅԴ ԱՆՑՔՈՎ։

10. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԲՆԱԿՎՈՂ ՊԱՐՏԱՎՈՐ Ե 2 ՏԱՐԻՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ՍՊԻՏԱԿԱՑՆԵԼՈՒ ՍԵՆՅԱԿԸ ՆԵՐՍԻՑ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ԻՐԱՎՈՒՆՔ ՎԵՐԱՊԱՀԵԼ ՏՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԽՆԱՄՔՈՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՑՈՒՅՑ ՏՎՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԸ ՅԵՐԿԱՐԱՑՆԵԼ, ԻՍԿ ԱՆԽՆԱՄ ՎԵՐԱԲԵՐՎՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ԿԱՐՃԱՑՆԵԼ։

11. ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԽՈՀԱՆՈՑ ԿԱՄ ԼՎԱՑՔԱՏՈՒՆ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ԼՎԱՑՔ ԱՆԵԼ, ԿԱՄ ՃԱՇ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ, ԿԱՄ ՊԱՏՇԳԱՄԲՈՒՄ, ՆԱՅԵՎ ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ՍԱՆԴՈՒԽՔՆԵՐԻ ՎՐԱ, ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ՄԻՋԱՆՑՔՆԵՐՈՒՄ ԿԱՄ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԵՐԻ ՄՈՏ ԴՆԵԼ ԻՆՔՆԱՅԵՌ, ՄԱՆՂԱԼ, ՊՐԻՄՈՒՍ, ԿԵՐԱՍԻՆԿԱ ՅԵՎ ԱՅԼՆ։

12. ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ, ԽՈՀԱՆՈՑՈՒՄ ՅԵՎ ՊԱՏՇԳԱՄԲՈՒՄ ԱՆՑ ԿԱՑՆԵԼ ԵԼԵԿՏՐՈԼԱՐԵՐ, ԱՌԱՆՑ ԵԼՑԱՆՑԻ ԿԱՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ։

13. ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՏԱԿ ՊԱՀԵԼ ԿԱՀԿԱՐԱՍԻՔՆԵՐ ՅԵՎ ՇՈՒՏ ԲՌՆԿՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ, ԻՆՉՊԻՍԻՔ ԵՆ ՆԱՎԹ, ՎԱՌԵԼԱՓԱՅՏ, ԲԵՆԶԻՆ, ԱԾՈՒԽ ՅԵՎ ԱՅԼՆ։

14. ԲՈԼՈՐ ԹԻԹԵՂՅԱ ՎԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՏԱԿ ԱՐՀՐԱԺԵՇՏ Ե, ՎՈՐ ԹԻԹԻՂԱՊԱՏՎԱԾ ԼԻՆԻ ՀԱՏԱԿԸ։

15. ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ԲԱՑ ԹՈՂՆԵԼ ՎԵՐՆԱՀԱՐԿԵՐԻ, ՄԱՌԱՆՆԵՐԻ



ՅԵՎ ՆԿՈՒՂԻՆԵՐԻ ԴՌՆԵՐԸ, ՅԵՎ ԹՈՒՅԼ ՉՏԱԼ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՄ ԿՈՂՄՆԱԿԻ ՄԱՐԴԿԱՆՑ ՄՏՆԵԼ ԱՅԴՏԵՂ, ՎՈՐՈՆՑ ԱՆԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՐՈՂ Ե ԱՌԱՋ ԳԱԼ ՀՐԴԵՀ։

16. ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ԱՌԱՆՑ ՀԱՇՎԻՉ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՅԵՎ ԵԼՑԱՆՑԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԾԵԼ ԶԱՆԱԶԱՆ ՏՆԱՅԻՆ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ, ԻՆՉՊԻՍԻՔ ԵՆ ՎԱՌԱՐԱՆ, ՀԱՐԹՈՒԿ, ՉԱՅՆԻԿ, ԳՐԵԼԿԱ, ՊԼԻՏԱ ՅԵՎ ԱՅԼՆ։

17. ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԴԱՐՍԵԼ ԱՅՆՊԻՍԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ, ՎՈՐՈՆՔ ԱՐԳԵԼՔ ՀԱՆԴԻՍԱՆԱՆ ՅԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆԸ, ՀՐԴԵՀԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՌԻԹ ՀԱՆԴԻՍԱՆԱՆ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ ԲՌՆԿՄԱՆ ՅԵՎ ԱՐԳԵԼՔ ՀԱՆԴԻՍԱՆԱՆ ՀՐԴԵՀԻ ՀԱՆԳՑՆԵԼՈՒՆ։

18. ԲՆԱԿՎՈՂԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎԱԾ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ՊԱՏՇԳԱՄԲԻ, ԽՈՀԱՆՈՑԻ, ՋՈՒԳԱՐԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ, ՎՈՐՆ ԱՌԱՋԱՑԵԼ Ե ԲՆԱԿՎՈՂԻ ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ, ԻՆՉՊԻՍԻՔ ԵՆ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐԻ ՓԵՂԿԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ, ԱՊԱԿԻՆԵՐ ՔՑԵԼՈՒ, ԴՌՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՏԱԿԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ՊԱՏԵՐԻ ՎՐԱ ԱՆԶԳՈՒՅՇ ՀԱՐՎԱԾԵԼՈՒ ԿԱՄ ՄԵԽԵՐ ԽՓԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՓՈՐՎԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Ե ԿԱՏԱՐԵԼ ԲՆԱԿՎՈՂՆ ԻՐ ՀԱՇՎԻՆ։

19. ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ՀԱՏԱԿԸ ՄԱՔՐԵԼ ԽԻՍՏ ԹՐՋԱԾ ԿԱՄ ՆԱՖԹԱԾ ՇՈՐՈՎ, ՎՈՐԸ ՊՈԿՈՒՄ Ե ՀԱՏԱԿԻ ՆԵՐԿԸ ՅԵՎ ՓՉԱՑՆՈՒՄ Ե ՇԵՆՔԸ։

20. ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ԲԱԿՈՒՄ ՅԵՂԱԾ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՌԵՐ, ԾԱՂԻԿՆԵՐ ՓՉԱՑՆԵԼԸ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ԲԱԿՈՒՄ ՅԵՂԱԾ ԾԱՌԵՐԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼ ՅԵՎ ՀԱՆՁՆԵԼ ՏԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ՊԱՐԵՏՆԵՐԻՆ, ՆՐԱՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԽՆԱՄԵԼՈՒ ՅԵՎ ՀՍԿԵԼՈՒ ԾԱՌԵՐԸ։

21. ԱՐԳԵԼՎՈՒՄ Ե ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՀՈՐԵՐՈՒՄ ՅԵՎ ՋՈՒԳԱՐԱՆԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՄԵՋ ԹԱՓԵԼ ԱՂԲ ԿԱՄ ԱՅՆՊԻՍԻ ԲԱՆ, ՎՈՐՈՆՔ ԿԽԱՆԳԱՐԵՆ ՋՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀՈՍԱՆՔԻՆ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՆԿԱՏՎԱԾ ԿՈՆԿՐԵՏ ԴԵՊՔԻ ՀԱՄԱՐ, ԽԱԽՏՈՂՆԵՐԸ ԿՅԵՆԹԱՐԿՎԵՆ ՏՈՒԳԱՆՔԻ, ՏՆԱՅԻՆ ԼԻԱ-

ԶՈՐԻ ԿԱԶՄԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ՀԱՄԱՁԱՅՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ, ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՎԱՆՆԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱՍԻՆ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՎՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ԿԵՏԻ ՀԻՄՈՒՆՔՈՎ։

22. ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ՆԱԽՈՐԴ ԱՄՍՎԱ ԲՆԱԿՎԱՐՁԸ ՎՃԱՐԵԼ ՎՈՉ ՈՒՇ ՔԱՆ ՀԱՋՈՐԴ ԱՄՍՎԱ 10-Ը

23. ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՇԵՂ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՍԿԵԼՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԴՐՎՈՒՄ Ե ՏԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՎՐԱ, ԻՍԿ ԲՆԱԿՇԻՆԿՈՈՊ ԲՆԱԿՎԱՐՁԿՈՈՊՆԵՐԻ ԳԾՈՎ-ՏԱՆ ՊԱՐԵՏՆԵՐԻ ՎՐԱ։

24. ՅԵԹԵ ՎԵՐԱԴԱՍ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԻ, ՎՈՐ ՏՆԱՅԻՆ ԼԻԱԶՈՐԻ ՅԵՎ ՊԱՐԵՏՆԵՐԻ ԱՆՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԲՆԱԿՎՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՏՃԱՌԱԾ Ե ՏԱՆԸ ՎՈՐՅԵՎԷ ՎՆԱՍ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԻ ԿԱԶՄՎԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՏՆԱՅԻՆ ԼԻԱԶՈՐԸ ՅԵՎ ՊԱՐԵՏՆԵՐԸ ԿԵՆԹԱՐԿՎԵՆ ՏՈՒԳԱՆՔԻ, ՎԵՐԱԴԱՍ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ։

**Կոմտնտժողկոմ (Հ. ՅԱՂՈՒԲՅԱՆ)**

**Բնակսեկտորի ռեֆերենտ՝ (Լ. ՂՈՒԿԱՍՅԱՆ)**

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм ССР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0203170

326 С И/А46
Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР